

օտար ♦♦♦ գիր

Միգել Դելիբես
հինգ ժամ մարիոյի հետ



Անտարես

Երևան

Miguel Delibes
CINCO HORAS CON MARIO

Իսպաներենից թարգմանեց
ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Դելիբես Միգել

Հինգ ժամ Մարիոյի հետ: Վեպ/Միգել Դելիբես.– թարգմ.
Ռ. Պետրոսյան:– Եր.: Անտարես, 2022.– 292 էջ:

Վեպի գլխավոր հերոսուհին Կարմեն Սոտիլյոն է, որը նոր է կորցրել ամուսնուն և նրա հոգեհանգստյան գիշերը արթմնի է անցկացնում հանգուցյալի կողքին: Սեղանին դրված է Աստվածաշունչը, որը կինը թերթում է՝ ընթերցելով հատկապես ամուսնու ընդգծած հատվածները: Արթնանում են հիշողությունները, և լիովին անսպասելի սկսվում է դանդաղ ու չկապակցված մի մենախոսություն, որում սակայն ուրվագծվում է իրական կյանքը: «Հինգ ժամ Մարիոյի հետ» վեպը հոգեբանական հոգեցունց երկ է, որը կանացի հոգու բացահայտման միջոցով վերհանում է իսպանական հետպատերազմյան ժամանակների հասարակության խորխորատները:

ISBN 978-9939-76-869-4



Վճարես

© MIGUEL DELIBES, 1966,
and HEIRS OF MIGUEL DELIBES
© Անտարես, 2022

Խոսե Խիմենես Լոսանոյին



ԱՂՈԹԵՔ ԱՍՏԾՈՒՆ

ԴՈՆ ՄԱՐԻՈ ԴԻԵՍ ԿՈՆՅԱԴՈՅԻ ՀՈԳՈՒ ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

որը, հետմահու քավելով յուր մեղքերը,
վախճանվեց 1966 թվականի մարտի 24-ին,
49 տարեկանում
R.I.P

Նրա անմխիթար տիկին դոնյա Մարիա դել Կարմեն Սոտիյոն, զավակները՝ Մարիոն, Մարիա դել Կարմենը, Ալվարոն, Բորխա ի Մարիա Արանսասուն, աները՝ ձերդ գերազանցություն դոն Ռամոն Սոտիյոն, քույրը՝ Մարիա դել Ռոսարիոն, եղբոր կանայք՝ դոնյա Խուլիա Սոտիյոն և դոնյա Էսկարնասիոն Գոմես Գոմեսը, մորեղբայր-մորաքույրերը, զարմիկ-զարմուհիները, ինչպես նաև ընտանիքի մնացած անդամները ցավում են անդամնալի կորստի համար և աղոթում ննջեցյալի հոգու հանգստության համար:

Ազո պատարագը տեղի կունենա վաղը՝ ժամը 8-ին,

Սան Դիեգո առաջնորդարանում:

Հուլարկավորությունը տեղի կունենա ժամը 10-ին:

Ազո պատարագի մասին կհայտարարվի առանձին:

Ազո տուն՝ Ալֆարերոս 16, առաջին հարկ,
աջ թևի վրա:

Տպագրությունը՝ Պիո Տեյոյի:

Դուռը փակելով վերջին այցելուի հետևից՝ Կարմենը ծոծրակը թեթևակի հենում է պատին, զգում է մակերևույթի սառնությունը և լավ չտեսնող մարդու նման հաճախակի թարթում աչքերը: Աջ ձեռքում ցավ է զգում, իսկ շուրթերն ուռած են անդադար համբույրներից: Եվ քանի որ չգիտի ինչ ասել, կրկնում է այն, ինչ ասում է առավոտից. «Վալեն, հավատս չի գալիս, անհնար է համակերպվել էդ մտքի հետ»: Վալենը նրբորեն բռնում է նրա ձեռքը և չհանդիպելով որևէ դիմադրության՝ միջանցքով տանում իր սենյակ.

– Պիտի մի քիչ քնես, Մենչու: Ես հիանում եմ քո արիությանը, բայց ինքդ քեզ մի խաբիր, ահավոր արհեստական է նայվում: Դրանից ավելի ես սպառվում: Նյարդերն իրենցը կանեն: Վաղը կտեսնես:

Կարմենը նստում է մեծ մահճակալի եզրին և հնազանդորեն հանում կոշիկները՝ ձախ ոտքի ծայրով հանելով աջ ոտքի կոշիկը, հետո՝ հակառակը: Վալենտինան նրան օգնում է պառկել, իսկ հետո վերմակը եռանկյունաձև ծալում է, որպեսզի ծածկի մարմնի կեսը՝ գոտկատեղից մինչև ոտքերը: Մինչև աչքերը փակելը Կարմենը հանկարծ վարանում է.

– Քնել, ոչ, Վալեն, քնել չեմ ուզում, ես պիտի նրա հետ լինեմ: Այսօր վերջին գիշերն է: Դու լավ գիտես:

Վալենտինան զգոն է երևում: Ինչպես նրա ձայնը (ձայնի տոնայնությունն ու բարձրությունը), այնպես էլ շարժումները անսպառ էներգիա են փոխանցում.

– Չես ուզում, մի քնիր, բայց հանգստացիր: Պիտի հանգստանաս: Համենայնդեպս, գոնե փորձիր:– Նայում է ժամացույցին:– Վիսենտեն չի ուշանա:

Կարմենը ձգվում է սպիտակ վերմակի տակ, փակում է աչքերը, բայց կարծես դա էլ նրան քիչ է թվում, և լույսից պաշտպանվելու համար դրանք փակում է աջ մերկ թևով, որը սև սվիտերի՝ մինչև դաստակը ծածկող մասի համեմատ ահավոր գունատ է երևում: Ասում է.

– Կարծես մի դար անցած լինի այն պահից, երբ այս առավոտ զանգեցի քեզ: Աստված իմ, ի՞նչ ասես, որ չեղավ: Բայց դեռ հավատս չի գալիս, անհնար է համակերպվել էդ մտքի հետ:

Կարմենը պառկած է՝ փակող-պաշտպանող թևը աչքերին դրած. մտովի տեսնում է անարտահայտիչ և փայտամած դեմքեր, որոնք անհաղորդ, բայց իբրև թե վշտալից ասում են. «Այդպիսի բաներ», «Պիտի համակերպվես», «Կարմեն, հոգ տար քո մասին, դու պետք ես երեխաներին», «Վաղը քանիսի՞ն են վերցնում»: Ինքն էլ թե. «Շնորհակալ եմ, ոմն մեկ» կամ «Շնորհակալություն, ոմն մեկուհի», իսկ պատվարժան այցելուներին. «Ի՞նչ ուրախ կլինեիր խեղճ Մարիոն, եթե տեսներ ձեզ այստեղ»: Այցելուները փոխարինում էին մեկը մյուսին, բայց նրանց թիվը չէր պակասում: Նման գետի հունի: Սկզբում ամեն ինչ պարզ էր ու սովորական: Երկարավուն դեմքեր, լարված լռություն: Լարվածությունը մեղմելու համար հենց Արմանդոն էր, որ անեկդոտ պատմեց միանձնուհիների մասին: Մտածել էր՝ Կարմենը չի լսի, բայց լսեց, թեպետ անկախ նրա լսել-չլսելուց, Մոյանոն՝ իր կաթնագույն գունատ դեմքով և վարդապետի սև, մետաքսաման մորուքով, նախատինքով լուռ հայացք գցեց նրա վրա: Այնուհանդերձ, լարվածությունը առաջվանը չէր: Մոյանոյի մորուքն ու մահացու գունատությունը համընկնում էին

հոգեհանգստյան տրամադրության հետ: Փոխարենը Վալենի շէկ գանգրափունջը դրա հետ հեշ չէր խոսում: «Երբ ինձ ասացին, չհավատացի: Ախր երեկ էի տեսել նրան»: Կարմենը կռանում էր և համբուրում այտերը: Իրականում չէին համբուրվում, միմյանց զննելով՝ հպում էին այտերը՝ սկզբից՝ ձախով, հետո՝ աջով, համբուրում էին օդը կամ գուցե ինչ-որ մեկի արձակ մազերը, երկուսն էլ լսում էին համբուրյրի ձայնը, բայց չէին զգում ջերմությունը: «Ես՝ նույնպես: Երեկոյան ճաշեց, կարծես ոչինչ էլ չէր եղել, հետո կարդաց մինչև ուշ գիշեր: Իսկ առավոտյան՝ խնդրեմ: Մտքովս էլ չէր անցնի»: Մոյանոյի մորուքը հրաշալիորեն ներդաշնակվում էր միջավայրի հետ: Նաև գիտնականի դեմքի պես ճեփ-ճեփմակ երեսը: Նա միակ մարդն էր, որին Կարմենը կարող էր երախտապարտ լինել: «Չե՞ս նեղվի, եթե քողը բացեմ»: «Ամենևին, ընկերուհիս»: «Այդպիսի բաներ, Կարմեն»: Երկու կանայք այտերը սեղմեցին միմյանց, նախ՝ ձախով, հետո՝ աջով, և համբուրեցին օդը, դատարկությունը, երևի ինչ-որ մեկի արձակ մազերը, այնպես որ, երկուսն էլ զգացին համբուրների ձայնը, բայց ոչ ջերմությունը: «Երդվում եմ՝ էս տեսքով հանգուցյալ տեսած չկամ: Նույնիսկ գույնը չի գցել»: Եվ Կարմենն անսահման հպարտություն զգաց հանգուցյալի նկատմամբ, կարծես նրա վաստակն էր: Ոչ ոք չէր կարող համեմատվել Մարիոյի հետ. նա իր հանգուցյալն էր, ինքն էր նրան հարդարել: Բայց Վալենը պնդում էր. «Ես նախընտրում եմ նրան ողջ հիշել»: «Տես, է, բացարձակ չի փոխվել»: «Նույնիսկ այս վիճակում»: Նույնը եղավ նաև Մենչուի հետ, բայց Մենչուն նրա դուստրն էր և ուրիշ ճար չուներ: Երբ վերադարձավ դպրոցից, Կարմենը Դորոյի օգնությամբ ստիպեց նրան ներս մտնել և բացել աչքերը, որոնք աղջիկը համառորեն փակում էր: «Ընկերուհիս, հանգիստ թող նրան, նա

դեռ երեխա է»:- «Նա նրա դուստրն է և կանի այն, ինչ ես կիրամայեմ»:- Հիստերիկի մեկը: Մենչուն իրեն հիստերիկ կնոջ պես էր պահում:

- Մենք օձ ենք տաքացնում մեր կրծքին:

- Վերջ տուր, Մենչու, հանգստացիր, ինչ ուզում ես արա, միայն թե հանգստացիր: Հիմա ոչ մի բանի մասին մի մտածիր:

Գրեթե բոլորը մռայլ կերպարներ էին՝ մթամած, անթափանց աչքերով: Նրանց միավորում էր պատասխանատվության աղոտ զգացումը, կաղապարող սենտիմենտալիզմն ու հոշոտող կրքի մեջ նրան՝ Կարմենին, խեղդելու ցանկությունը լինի մատներով, թե շուրթերով: Նրանք գալիս էին շփոթահար դեմքերով՝ տենչալով հնարավորինս շուտ դուրս գալ: «Երբ ինձ ասացին, չհավատացի: Ախր երեկ էի տեսել նրան»: «Խեղճ Մարիո, ախր այնքա՞ն ջահել էր»: Վալենտինայի շեկ գանգրափունջն աչք էր ծակում: Ինչպես նաև դագաղի հետևի գրքերը՝ իրենց փայլիլուն, կարմիր, կանաչ, դեղին շապիկներով: Երբ «Քարոնի» տղաները գնացին, Կարմենը համբերատար հերթով գնում էր փայլիլուն շապիկները, որոնք շեղում էին մարդկանց ուշադրությունը սև կտորից: Վերջում, ձեռքերը փոշու մեջ կորած, տարօրինակ գոհություն զգաց:

«Այդպիսի բաներ»: «Ննջիր խաղաղությամբ»: Վերջում շատ լավ արեց, որ Բերտրանին խոհանոց ուղարկեց: Կատարածուն երբեք չպետք է նույն տեղում գտնվի ուսուցիչների հետ: Իսկ հետո՞ ևս մեկ տեսարան: Նրա մեղքով Անտոնիոն անհարմար դրության մեջ էր ընկել: Նման դեպքերում խուլերն անելիք չունեն: Անտոնիոն միայն ասաց. «Լավ մարդիկ մեռնում են, վատերս մնում ենք»։ իրականում նման բան չասաց, քթի տակ փնթփնթաց, բայց Բերտրանն ասաց. «Ի՞նչ եք ասում»,- և

Անտոնիոն շուկով կրկնեց՝ նախ կասկածանքով նայելով շուրջը, ապա Բերտրանը, թոթվելով ուսերն ու վկայակոչելով հանդիսատեսին, բարձրաձայն ասաց. «Ես ոչինչ չեմ լսում», ապա Անտոնիոն նայեց հանգուցյալին, այնուհետ՝ ներկաներին, ապա նորից ու նորից կրկնեց, էլ ավելի ուժեղ. «Ասում եմ՝ լավ մարդիկ մեռնում են, վատերս մնում ենք», և Բերտրանը պատասխանեց. «Ախ, կներեք, չէի լսել»,– և բոլորը հասկացան ասվածը:

Ոմանք գալիս էին, ոմանք՝ հեռանում: Բոլորին միավորում էին պատասխանատվության անորոշ զգացումը և քծնանքով ու հետաքրքրասիրությամբ փոթորկված դեմքերը: Անտոնիոյի կինը՝ Բենեն, օգտվելով լարված լռությունից, խորագույն հոգոցից հետո, երբ թվաց՝ ուր որ է կպայթի, ասաց. «Սիրտը դավաճան է, հայտնի բան է»: Դրանից բոլորը թեթևացած շունչ քաշեցին: Աչքերը կորցրին իրենց ցավոտ արտահայտությունը, դեմքերը հետզհետե կլորացան: Մեղավորը գտնվել էր: Բայց Կարմենը միայն մի բան ասաց Բերտրանին. «Բերտրան, գնացեք խոհանոց, էստեղ շարժվելու տեղ չկա»:

– Չես պատկերացնի՞ ինչ էր կատարվում խոհանոցում, Վալեն: Իսկական խառնաշփոթ: Ի վերջո, Մարիոն այնքան սիրված էր հասարակ մարդկանց շրջանում:

– Այո, սիրելիս, բայց հիմա լռիր: Ոչ մի բանի մասին մի մտածիր: Փորձիր հանգստանալ, աղաչում եմ:

– Կարծես մի դար անցած լինի այն պահից, երբ այս առավոտ զանգեցի քեզ, Վալեն:

Ջանգեց նրան, երբ պարզվեց ինչ է պատահել: Եվ Վալենն իսկույն վազեց: Նա առաջինն էր: Կարմենը մեկուկես ժամ հոգին բացեց նրա առաջ: *«Սովորաբար նա ավելի շուր էր վեր կենում, բայց երբ բացում էի շերտավարագույրները, մրաժում էի՝ գուցե քնած է: Անկեղծ ասած՝ ինձ զարմացրեց նրա կեցվածքը, որովհետև*

Մարիոն սովորաբար կողքի վրա էր քնում, ուրքերը՝ ծալած, ուսրի մահճակալի կեսը չափազանց շար էր նրա համար, իհարկե երկարությանը, ոչ լայնությանը, պարկերացրու՝ դա ինձ ինչ-որ առումով կաշկանդում էր, բայց նա բանի տեղ չէր դնում, ասում էր, որ միշտ է այդպես եղել, որ դա նրա մտքի մանկուց է, ինչ իրեն հիշում է, բայց այս առավոտ բերանքսիվայր էր պառկած, հանգիստ, խաղաղ դեմքով, որ Լուիսն ասում է, որ մահվան ժամին մարդիկ բնագոյաբար զգում են, որ խեղդվում են և շրջվում են, որպեսզի ավելի հեշտ շնչեն, բայց, ըստ իս, նրանք նման են ջրից դուրս հանած խեղդամահ լինող ձկների, հասկանո՞ւմ ես, բայց դեմքի գույնը և այլն, կարծես ոչինչ էլ չէր եղել, լրիվ նորմալ էր, ոչ էլ կծկվել էր, կարծես քնած լիներ»... Բայց երբ դիպել էր նրա ուսին՝ ասելով. «Վեր կաց, Մարիո, արդեն ուշ է», - նույն պահին այրվածի պես ձեռքը հետ էր քաշել: «Միտը դավաճան է, հայտնի բան է»: «Վաղը քանիսի՞ն են վերցնում»: «Ես՝ նույնպես: Երեկոյան ճաշեց, կարծես ոչինչ էլ չէր եղել, հետո կարդաց մինչև ուշ գիշեր: Իսկ առավոտյան՝ խնդրեմ: Մտքովս էլ չէր անցնի»: Նա հարցրեց Վալենին (վստահում էր նրան).- Վալեն, չգիտե՞ս արդյոք՝ Մարիոն ձեր գերազանցություն կոչմանն արժանացել է, թե ոչ: Խոսքը սին մեծամտության մասին չէ, ինձ ձիշտ հասկացիր, բայց մտածիր ծանուցագրի մասին, հասկանո՞ւմ ես, առանց դիմելաձևի, չոր-չոր ծանուցագիրը կարող է անպատկառություն թվալ: Վալենտինան չէր պատասխանում:

- Լսո՞ւմ ես:

Նրան թվաց՝ Վալենը լաց է լինում:

- Դե, չգիտեմ,- անսպասելի արձագանքեց Վալենը:- Ինձ շփոթեցրիր: Մի վայրկյան սպասեք, ես կխնդրեմ Վիսենտեին:

Կարմենը լսեց լսափողից եկող աղմուկը, նաև միջանցքով անցնող Վալենի ռիթմիկ ոտնաձայները, որոնք գնալով ավելի անհաստատ ու հապշտապ էին դառնում: Քիչ անց. «Վիսենտեն ասում է, որ ոչ, որ ձերդ գերազանցությունը միայն դիրեկտորների համար է: Ցավում եմ, սիրելիս»:

Դրանք համառ, կպչուն ուրվականներ էին, որ տգրուկների պես կպչում էին նրա ձեռքից կամ ստիպում կռանալ նախ՝ ձախ, ապա՝ աջ: Չես պատկերացնի՞ ի՞նչ տպավորություն թողեց այդ ամենն ինձ վրա, ուտել նույնիսկ չէի կարողանում: Անխելն ասում էր. «Կեր, կեր, այլևս ոչինչ չես փոխի»: *Իսկ երեխաներն իրենց ծնունդով վշտից բացի ուրիշ ոչինչ չեն բերում, քեզ արնաքամ են անում, փողդ կախում, որ մեջն ապրեն: Ինչպես տեսնում ես, Մարիո, ոչ մի արցունք: Ավելին՝ նրանք նույնիսկ իրենց հոր մահը չեն սգում:*– «Ինձ հանգիստ թողեք, մայրիկ, խնդրում եմ, ինձ համար դա մխիթարանք չէ: Դրանք հիմար ձևականություններ են, ինձ վրա հույս չդնեք: Կես ժամ լաց է լինում զուգարանում: Սա զգվելի սվիտեր է, Վալեն, մի վիճիր, խեղճ մորս սգից մնացած սվիտեր, Աստված հոգին լուսավորի: Իսկ ես դրանով խրտվիլակի տեսք ունեմ, վրաս փոքրացել է, և ամենավատն այն է, որ ուրիշը չունեմ: Կարմենը սև սվիտերը ձգում է կրծքի հատվածում: Ճիշտն ասած՝ Կարմենի կրծքերը նույնիսկ սև սվիտերով չափից դուրս ռազմատենչ են սգի համար: Կարմենը ենթագիտակցաբար զգում է, որ ճչացող, աչքի զարնող կամ սադրիչ որևէ բան չի կարող համապատասխանել տվյալ հանգամանքներին: *Ես, անշուշտ, արհեստական շնչառություն կրայի նրան, ամեն ինչ կանեի, միայն թե նա ողջ մնար, թեև շարերն ասում են, որ դա զգվելի բան է, բայց ոչ ես, ճշմարիտն ասած, միայն մեկ անգամ եմ տեսել, թե*

դա ինչպես են անում՝ ֆիլմում. չէի համարձակվի, հասկանում ես, որովհետև նման բաների նույնիսկ ուշադրություն չես դարձնում, ինչպես հրշեջների դեպքում, քեզ չի հեղափոխում, չես էլ նկատում, դե, չգիտեմ ոնց ասել, դա ամենավերջին բանն է, որ կարող է մտքովդ անցնել: «Սիրտը դավաճան է, հայտնի բան է»: «Ուզում եք հավատացեք, ուզում եք՝ ոչ, բայց նա երբեք չի հիվանդացել»: «Մարիո կրտսերի պահվածքն ինձ բոլորովին չի զարմացնում, Մենչու, նրանք շատ մտերիմ էին»: Վալենտինան սկսեց ծիծաղել. «Փորձե՛լ ես ներքնազգեստ ու սև կրծկալ հագնել»: Լրիվ ուրիշ կլիներ: Սվիտերը փոքր էր, կրծքերը՝ մեծ, բայց կտորը չէր թափանցում: «Կրծքերս միշտ էլ իմ թերությունն են եղել: Իմ ուզածից մեծ են եղել»: Վալենտինան ու Եսթերը չէին հեռանում նրա կողքից: Եսթերը շուրթերը չէր շարժում, բայց թուլության ժամը մոտենում էր: Ժամանակ առ ժամանակ Վալենտինան համբուրում էր նրա ձախ այտը. «Մենչու, սիրելիս, չես պատկերացնում, թե որքան ուրախ եմ, որ այդքան քաջ ես»: Ի լրումն դրա՝ Բորխան վերադարձավ դպրոցից՝ բղավելով. «Ես ուզում եմ՝ հայրիկն ամեն օր մեռնի, որ էլ դպրոց չգնաս»: Նրան անխնա ծեծել էր այնքան, մինչև ձեռքը սկսել էր ցավել: «Հանգիստ թողեք նրան, սենյորիտա, նա դեռ երեխա է, չի հասկանում, հետո կզղջաք»: Բայց նա անխնա, կուրորեն ծեծել էր նրան: Հետո կլորացած, զարմացած աչքերով ուրվականները սեղմում էին նրա ուռած ու ցավող ձեռքը կամ դեմքները սեղմում էին նրա դեմքին, նախ՝ ձախից, հետո՝ աջից, և ասում. «Երբ իմացա, շոկի մեջ էի»: «Երբ ինձ ասացին, չհավատացի»: «Անխելն ասում էր. «Կեր, սոված մնալով ոչինչ չես փոխի»: Բայց Մարիոյին ոչ համբուրում էին, ոչ ձեռքը սեղմում: Ընկերները երեսները թաքցնում էին նրա ուսի հետևում և աջ ձեռքով կատաղի թմփոմփացնում

թիկունքին, կարծես կապույտ սվիտերի վրայից փռշի էին թափ տալիս: «Ինձ ոչինչ չի զարմացնում, նրանք շատ մտերիմ ընկերներ էին: Խեղճ Մարիո»: «Հայրը, թե՞ որդին»: Այլևս չէր հասկանում, թե ինչ էր խոսում: «Երկուսն էլ: Ճիշտն ասած՝ երկուսն էլ»: Նա իր հանգուցյալն էր, ինքն էլ կզբաղվեր արարողակարգով: Նրան սափրեց էլեկտրական ածելիով և սանրեց մազերը մինչև «Քարոնի» տղաները կծածկեին պատանքով: «Բացարձակ չգունատվեց: Հանգուցյալի նման չէ: Կյանքումս էսպիսի բան չեմ տեսել, դու ի՞նչ կասես: Չե՞ որ մենք ավանդույթի ժողովուրդ ենք»: «Այսպիսի բաներ»: Նա կախում էր գլուխը նախ՝ ձախ, հետո՝ աջ, ապա կլանում էր օդը, դատարկությունը, այնպես որ, համբույրի ձայնը լսում էր, բայց չէր զգում: «Միայն թե չասեք, որ մեր տիրոջը հագցնելու եք այնպես, ինչպես միշտ էր հագնվում դուրս գալիս»: «Ինչո՞ւ, Դորո»: Դորոն խաչակնքվեց. «Միայն թե չասեք, որ գունավոր կոշիկներ եք հագցնելու: Այդպես նույնիսկ վերջին աղքատի հետ չեն վարվում»: Կարմենը նրան ուղարկեց խոհանոց: Հարկ չէր համարում բացատրություններ տալ ծառաներին: Բերտրանին ասաց. «Բերտրան, գնացեք խոհանոց, էստեղ շարժվելու տեղ չկա»: Գնալիս Բերտրանն իր կարծատես, ջրալի, անհետաքրքիր աչքերով ասաց. «Լավ մարդ չէր, է, անթերի էր: Անթերի մարդկանց մոմի լույսով էլ չես գտնի: Դուք ինձ հասկանո՞ւմ եք, սենյորա»: Կարմենը կտրուկ հրեց նրան, որովհետև վերջինս ուզում էր համբուրել իրեն կամ նման մի բան: Կարմենը սափրեց Մարիոյին էլեկտրական սափրիչով, լողացրեց, սանրեց մազերը և մուգ մոխրագույն կոստյում հագրեց՝ նույն կոստյումը, որով նա դասախոսում էր Բարոթյան օրը, կողքերից պատռեց կոստյումը, որովհետև, չնայած դիակը հլու-հնազանդ էր, միևնույն է, միայն իր

համար չափազանց ծանր էր: Հետո գունավոր փողկապ կապեց՝ մուգ շագանակագույն կարմիր գծերով, բայց դժգոհ մնաց, քանզի հանգույցը չափազանց թույլ էր: Վերջում «Քարոնի» տղաները նրան դրեցին դագաղի մեջ և տեղափոխեցին գրասենյակ, որն այլևս Մարիոյի աշխատասենյակը չէր, այլ դամբարանը: Եվ Մարիոն ասաց. «Ինչո՞ւ հիմա»: Բայց երբ հապշտապ եկավ համալսարանից, արդեն պատկերացնում էր ամեն ինչ: Երևի Բերտրանն էր պատմել: Հոնքերը համարյա ծածկում էին աչքերը՝ խոհուն ու մռայլ արտահայտություն հաղորդելով դեմքին, կարծես ուղեղի ծանրությունն էլ ավելի անտանելի էր դարձել, ապա հարթեցրեց, ուղղեց հոնքերի կամարները: «Պարկերացրեք՝ նա երևի արդեն ինչ-որ բան զգացել էր, մենք երբեք նրան ոչ մի բանի համար չենք դիմել, ես նրան միայն ասացի՝ հայրիկ, բայց նա այնքան մտախոհ էր, լռակյաց, Մարիոն երբեմն վախեցնում է ինձ, Վալեն, այդ տղան չափազանց զուսպ է իր տարիքի համար, դա չի նշանակում, որ ես չեմ հիանում նրա հոգու կորուվով, բայց պետք է ազատություն տալ զգացմունքներին, ի վերջո մի օր դուրս են հորդելու, բայց արդեն ավելի վաղ ձևով, բայց նա իրեն այնպես է պահում, կարծես ոչինչ էլ չի եղել, կարծես արձան լինի, իսկ ես նրան ամեն ինչ անսպասելի ասացի: Նա նույնիսկ չի արթնացել: Լուիսն ասում է՝ կաթված է եղել, և ես չկարողացա զսպել ինձ ու սկսեցի լաց լինել, գրկեցի նրան, Վալեն, չես պարկերացնի, թե դա ինչ ցավ էր, որովհետև մի քանի րոպե ինձ թվում էր՝ ծառ եմ գրկել կամ ժայռ, լաթի կտոր, բայց նա միայն հարցրեց՝ ինչո՞ւ հիմա, բայց նույնիսկ մի կաթիլ արցունք չթափեց, թեև բնական կլիներ, հավաքա ինձ, չէ՞ որ նա նրա հայրն էր»:

– Մենք օձ ենք տաքացնում մեր կրծքին:

– Լռիր և հանգստացիր:

Պիո Տեյլոն հուզված էր: Մարիոն, անշուշտ, շատ սիրված էր հասարակ մարդկանց շրջանում: Խնդիրը կապված էր «ձերդ գերազանցության» հետ: Թվում է՝ մանրուք է, բայց այդ մի հատիկ բառը ծանուցագրին համապատասխան ձև կհաղորդի, ինքդ գիտես, թե ինչպիսին են այդ ծանուցագրերը, Վալեն, մի վիճիր: «Այդպիսի բաներ»: «Կարմեն, հոգ տար քո մասին, դու պետք ես երեխաներին»: «Երբ ինձ ասացին, երդվում եմ, չհավատացի»: «Ես՝ նույնպես...»: Բայց էնկարնան բերանը փակեց: Էնկարնայի միջամտությունը բարբարոս ու անիմաստ արարք էր: «Այդպիսի բաներ»: «Շնորհակալություն, սիրելիս»: Կարմենը կռանում էր, և երկունս էլ հպվում էին միմյանց այտերին, նախ՝ ձախով, ապա՝ աջով, երկունս էլ զգում էին, այսպես կոչված, համբույրի հազիվ լսելի ձայնը, բայց ջերմություն չէին զգում: «Բնագրաբար արում էի մահվան ծանուցագրերը, ես նույնիսկ մտադիր չէի մուտքում ծանուցագիր փակցնել, հասկացիր ինձ, ես սարսափում եմ դրանցից, ահավոր բան են, բայց ինքդ էլ գիտես՝ որ ժամին է մահացել, սրիպված ես հաշվի նստել հանգամանքների հետ, մարդիկ պիտի իմանան, որովհետև գիտեմ՝ որքան էլ ասես, որ շնից էլ վարն էր կամ լավն էր, մեկ է, ձևականությունները պիտի պահենք, Վալեն, որովհետև «Էլ Կոռետո»-ի վաղվա համարում կգրեն, որ թաղումը տասին է, բայց դա ոչինչ չի տա, որովհետև առավոտ կանուխ մարդիկ վազում են աշխատանքի և ոչինչ չեն իմանա, վստահ եղիր, այնպես որ, կես տասնյակ պատվիրել էմ՝ մեկը՝ տան համար, մեկը՝ ինստիտուտի, երրորդը՝ «Էլ Կոռետո»-ի, ևս մեկը՝ մի ուրիշ տեղի, նաև ռադիոյով հայտարարելու համար՝ «Բանավոր օրագրից» հետո»:

Կարմենը շատ լավ գիտեր, որ երկրի վրա Մարիոյի վերջին ժամերը կախված են իրենից: Գիրքն այնտեղ էր՝

զարդասեղանին, իսկ նրա էջերում թաղված էին Մարիոյի վերջին մտքերը: Երբ Կարմենին հաջողվի ազատվել այդ կաչուն ուրվականներից, կմիանա նրան: Հիմնական խոչընդոտը էնկարնան էր, բայց Չարոն տարավ նրան: Չարոն այստեղ չէր գալիս, քանի դեռ երեխաները չէին վերադարձել դպրոցից: Գնացել էր նրանց հետևից: Բորխան բղավելով ներս մտավ. «Ես ուզում եմ՝ հայրիկն ամեն օր մեռնի, որ էլ դպրոց չգնամ»: Նրա ձեռքը ցավում էր: Կարմենը չգիտեր՝ նրան ծեծելն էր պատճառը, թե անխիղճ ուրվականների համառ ձեռքսեղումները: Շուրթերն ուռել էին անվերջ համբույրներից: «Այդպիսի բաներ»:- «Ո՛ւմ մտքով կանցներ»: «Քանիսի՞ն են վերցնում»: Բայց էնկարնան այլ պատմություն է: Էնկարնան չէր փոխվել: Ներկաներին հրելով՝ փոթորկի պես ներխուժեց: Եվ աղաղակում էր. «Աստված իմ, սա էլ լքեց ինձ: Էս մեկն էլ»: Եվ մարդկային մռայլ խմբերն իրար խառնվեցին, նայում էին նրան ու քչփչում, իսկ էնկարնան վկայակոչում էր բոլորին՝ կիսելու իր մենությունը: Կարծես խենթ լիներ: «Կարծես դիվահար լինի», - ասաց Անտոնին: Իսկ հետո, երբ ծնկի իջավ, բացականչեց. «Տե՛ր, ի՞նչ եմ արել, ինչո՞ւ ես պատժում ինձ»: Իսկ խմբերը միանում-բաժանվում էին, բացվում-փակվում: Քչփչում էին. «Սա ո՞վ է»: Եվ նրանց հայացքում փրկող սենտիմենտալիզմն այժմ վերաճել էր այրող հետաքրքրասիրության, նրանք կանգնում էին ոտքի ծայրերին, որպեսզի ավելի լավ տեսնեն, հմայվեն այդ տեսարանով: Բայց շատ բան չտեսան: «Դո՛ն Մարիոյի համար՝ հարց չկա»: Կարմենը պնդում էր. «Ինչպե՞ս կարող եմ չվճարել ծանուցագրի համար»: «Մի համառեք, սենյորա, դո՛ն Մարիոն անշահախնդրորեն պաշտպանում էր աղքատներին, իսկ դա, ուզեք թե ոչ, արժեք ունի»: Կինը զիջեց, թեև գիտեր, որ Պիո Տեյլոն նման բաներ չի սիրում, որ

խոնավ նկուղում նստած, «Էլ Կոռեո»-ի՝ հին բանբասանքներով թերթը ձեռքին՝ ձեռքով ծանուցագրեր ու մահախոսականներ է գրում: «Աշխարհում մեր տիրոջ պես բարի մարդ չկար, բայց տեսեք, թե ինչ եղավ...»: Կարմենը կտրուկ ընդհատեց նրան. «Ես տեսարաններ չեմ սիրում, Դորո, արցունքներդ ավելի լավ առիթի համար պահիր»: Անբարո էր, որ ծառաներն ու հաշվապահները լաց էին լինում, բայց երեխաները՝ ոչ: «Ես տեսարաններ չեմ սիրում, Դորո: Ինչ է, ինձ չեք լսո՞ւմ»: Եվ Դորոն, քիթն ուժեղ քաշելով և աչքերը սրբելով, մտավ խոհանոց: Աղմուկը մեծանում էր փոփրած ծովի նման: Խոսակցությունները ցրվում էին՝ տարրալուծվելով խեղդուկ օդում սիգարի ծխի մեջ: «Շոգ է»: «Գուցե պատուհանը բացե՞նք»: «Այստեղ մթնոլորտը շատ լարված է»: «Նրանից լավ մարդու չես գտնի»: «Բացեք»: «Միայն թե միջանցիկ քամի չլինի»: «Միջանցիկ քամին լավ բան չէ»: «Սիրտը դավաճան է, հայտնի բան է»: «Ես վախենում եմ միջանցիկ քամուց»: «Իսկ հայրս, ինչպես գիտեք, միջանցիկ քամուց չէր վախենում, ոչ թե որովհետև ես եմ այդպես ասում, պարզապես նա երբեք չի հիվանդացել»: «Իրոք որ»: «Երկնքի արքայության մեջ մնա, դոնյա Կարմեն»: Կարմենը կռանում էր նախ՝ ձախ, ապա՝ աջ, ծամածռում էր շուրթերը, իսկ այտին տրված համբույրի ձայնը հնչում և անցնում էր հպումի պես: «Կարծեմ ես նրան փառապանք եմ պարծառել, բայց չեմ զղջում դրա համար, Վալեն, անկեղծ ասա, դուստրը կարո՞ղ է հոր հետ այդպես վարվել, նույնիսկ հրաժեշտ չբալ նրան: Որովհետև մրած-չմրած հիստերիկի պես գոռգոռում էր՝ «Ինձ հանգիստ թողեք, խնդրում եմ, ես վախենում եմ», բայց ես ու Դորոն ամբողջ ուժով ստիպեցինք նրան բացել աչքերը, լավ կանի, եթե մի օր շնորհակալություն հայրնի դրա համար»:

Կարմենը չգիտեր՝ աղոթե՞ր, թե՞ ինչ: Ամբողջ ժամանակ դագաղի առաջ անշարժ կանգնած՝ աղաչանքի ու խղճմտանքի անողոք արտահայտությամբ նայում էր հորը: Հենց Արոստեգին էր, որ ասաց. «Նա լավ մարդ էր», և այդ ժամանակ դոն Նիկոլասն անսպասելի դիմեց նրան. «Ո՛ւմ համար էր լավը»: Իսկ Մոյանոն իր կեղտոտ մորուքի միջից մրմնջաց. «Նա չի մահացել, նրան խեղդել են»: Դոն Նիկոլասը կառչեց դրանից. «Ներեցեք, Կարմեն, դուք այնտե՞ղ եք եղել»: Բայց նա ոչինչ չասաց, որովհետև տղամարդիկ միշտ հանելուկներով էին խոսում, իսկ ինքը չէր հասկանում. կենդանության օրոք Մարիոն ոչ մի օր նեղություն չքաշեց՝ բացատրելու դրանք: «Գուցե մի քիչ փակե՞ք պատուհանը»: «Լավ, շնորհակալություն»: «Գիշերվա ցուրտն արդեն զգացվում է»: «Երեկ ցուրտ էր»: «Մտածիր քո մասին, Կարմեն, երեխաները քո կարիքն ունեն»: «Այստեղ մթնոլորտը շատ լարված է»: «Երբ ինձ ասացին, չհավատացի, երեկ տեսա նրան»: «Ես՝ նույնպես...»: Պիո Տեյոյին ասաց. «Նշո՞ւմ եք: Հա՛: Աղոթեք Աստծուն նրա հոգու հանգստության...»: Մի պահ Կարմենն իրեն գլխավոր հերոսուհի զգաց և մտածեց. «...դոնյա Կարմեն Սոտիլյո», բայց ժամանակին ուշքի եկավ. «Կարո՞ղ եմ շարունակել»: Պիոն հարցրեց. «Դոն Մարիոն կոչում չունե՞ր»: «Ոչ, ինչպես տեսնում եք: Դա միայն դիրեկտորների համար է»: Լսափողից լսվող ձայնը զայրացած էր երևում. «Ուրիշները պակաս վատակով արժանացել են այդ կոչմանը»:– «Ինքներդ եք տեսնում, ես ի՞նչ կարող եմ անել»: Պիո Տեյոն դանդաղորեն նշումներ էր անում: Վերջում Կարմենը շեշտեց. «Ամբողջովին սև շրջանակ, Պիո, խնդրում եմ»: «Անհոգ եղեք»: Միայն սգո մոլեռանդ զգացումն ու զարդասեղանին դրված գիրքն էին հիմա նրան կապում Մարիոյի հետ: Այո: Նաև նրա դին: «Նա չգունատվեց: Եթե ինձ

չասեիք, չէի հավատա, որ մահացած է, երդվում եմ մորս անունով»: «Ոչի՞նչ, եթե պատուհանը մի քիչ էլ փակենք»: «Ձմռան ցուրտ է փչում»: «Լավ, շնորհակալություն»:

– Գիրքն այստե՞ղ է, Վալեն:

– Շըըըը: Ահա այստեղ է: Մի անհանգստացիր, սիրելիս: Իսկ հիմա հանգստացիր, խնդրում եմ, հանուն բոլոր սրբերի: Ոչ ոք այն քեզնից չի խլի:

Վալենտինան վեր է կենում տեղից, ձեռքը դնում ծոծրակին և օգնում նրան նորից ձգվել, ապա զգուշորեն ծածկում է նրան սպիտակ սավանով: Վալենտինան կանգնած զննում է չորս կողմը, նայում ծաղկազարդ տպագրություններին, մահճակալի վերևի խաչին և ոտքերի տակ՝ ժամանակի կերած-մաշած գորգին, որը ծածկել է մանրահատակի ուղղանկյունը: Շարժվում է դանդաղ, լուռ, ինքն իրեն զննում սենյակի կիսամթի մեջ երևացող պահարանի հայելում, նախ՝ առջևից, ապա՝ կիսադեմից՝ երեք անգամ շոյելով կլորիկ փորը: Նրա շուրթերը դժկամորեն ծամածռվում են: Շրջվելուն պես աչքերը նորից հառում է գրքին, ցավազրկող դեղահաբերին, հեղուկով շշին, բանալիների փոքրիկ խրձին, դրամապանակին և հին զարթուցիչին: Բնազդաբար հառաչում է: Կարմենը կրկին ծածկում է աչքերը ձեփ-ձերմակ ձեռքով: Նորից նստում է.

– Այստե՞ղ ես, Վալեն:

– Այո, սիրելիս, հանգիստ եղիր, կողքիցդ մի քայլ չեմ գնա, երդվում եմ, բայց հիմա հանգստացիր: Փորձիր հանգստանալ, խնդրում եմ:

Դորոն՝ կարմրած կոպերով ու քթով, համառորեն ժխտում էր. «Մեր տիրոջ հետ պլաստիկ կամ մի ուրիշ բան չեք դնելու, չէ՞: Մամա ջան, էդ տեսքով ինչի ասես, որ նման չի լինի: Իմ գյուղում նույնիսկ ամենաչքավոր մեկին էդպես չեն թաղի: Գիտե՞ք, մեր տիրոջը՝ դոն Պորֆիրիոյին

ֆրանցիսկյանի պես հազած թաղեցին»: Կարմենը բարկացավ նրա վրա: Նրա սկզբունքին դեմ էր ծառաներից քարոզ լսելը: «Դեռ հավատար չի գալիս, անհնար է համակերպվել էդ մտքի հետ»: «Մենչու, ես հիանում եմ քո արիությանը, բայց Մարիոն անցավ բոլոր սահմանները»: Ինչպե՞ս հարմարեցնեմ Պիո Տելյոյի երեսուն միլիմետրանոց սև շրջանակը Մարիոյի կապույտ սվիտերի հետ: Ընկերները թաքնվում էին նրա թիկունքում և ուժեղ հարվածում մեջքին, կարծես ուզում էին կապույտ սվիտերի վրայի փոշին թափ տալ: «Պինդ փակիր: Լավ կլինի՝ պինդ փակես»: «Ցուրտ է»: «Միջանցիկ քամին շատ վատ բան է»: «Լավ, շնորհակալություն»: «Սիրտը դավաճան է, հայտնի բան է»: «Ճիշտ այդպես»: «Ամբողջովին սև շրջանակ, Պիո, խնդրում եմ»: Նա ծանուցագրեր չի սիրում, բայց ինչ արած: «Եվ ես մնացի կանգնած՝ ուղիղ, անշարժ, դեմ առ դեմ, թվաց՝ զայրացած էր, երդվում եմ՝ նա վախեցրեց ինձ. «Ո՞վ է խառնել գրքերը», «Դե, ես», – սասցի, նա էլ թե՛ «Գրքերը հենց ինքն են», «Էս ի՞նչ չարաձժիություններ են, էս փայլուն փաթեթավորումները ամենևին էլ սգի համար չեն, ոչ այսպիսի առիթի համար, ինքդ էլ գիտես, Վալեն, ինչ են անում հիմա գրքերի հետ, ինչի նման ասես, որ չեն սարքում, շոկոլադե փոսփի կամ նման մի բան, այնպես որ, ավելի շար ուզում ես ուրել, քան կարդայ, ժճարիտ է, որ ապրում ենք փաթեթավորման դարաշրջանում, չվիճես, սիրելիս, այժմ ամեն ինչ գնահատվում է այն բանով, ինչ երևում է դրսից, քան ներսից, դա, անշուշտ, ամոթ է ու խայրառակություն, միայն մրաձիտ, մեր դեպքում փանը հանգուցյալ կա, բայց ամեն ինչ գունագեղ է, միայն սատրանայի մրքով կարող էր նման բան անցնել, բայց ինձ էլ հո գիտես, հրեշտակի համբերություն է պեպք գիրք առ գիրք փեղափոխելու համար, այնինչ պեպք է, որ բոլոր կողմերում սև լինի, եթե

ոչ, ինքդ էլ լսեցիր, ինչ-որ ծառա վաղ առավոտից ինձ օր ու արև չի տալիս, չտեսնեիր, չէիր հավատար: Միայն ձեռքերիս կեղտը տեսնեիր, ինչպես ասում եմ՝ գրքերը միայն կեղտ ու փոշի են անում, ափսոսում եմ, որ ժամանակին չեմ հասկացել, դե հա, սգո տան տղաներն օգնում են ինձ, բայց ինքդ մտածիր՝ ի՞նչ կարող ես սպասել այդ մարդկանցից, իրենց գործը կանեն և ցրեսություն, նրանք ոչինչ չեն հասկանում, ոչինչ չեն հարցնում, ավելին չեն ուզում իմանալ»: «Կյանքումս էսպիսի բան տեսած չկամ, հավատա ինձ: Հանգուցյալը նույնիսկ գույնը չի գցել»: «Ձե՞ս ուզում նրան տեսնել, Վալեն: Ուզում եմ զգուշացնել, որ բոլորովին չի փոխվել»: «Ճիշտն ասած՝ չեմ ուզում, սիրելիս: Ես նախընտրում եմ Մարիոյին ողջ հիշել»:

Ուրվականները գալիս-գնում էին: Մշտական հոսք էր, մթնոլորտը՝ հակահիգիենիկ: «Այլևս անհնար է դիմանալ էս ծխին»: «Կարելի էր փոքր-ինչ ավելի հարգալից լինել»: «Այդպիսի բաներ»: Կարմենը կռանում էր նախ՝ ձախ, ապա՝ աջ, և մի քանի անգամ անընդմեջ, սուկ մեխանիկորեն, բացարձակապես ոչինչ չզգալով, համբուրում էր որևէ մեկին. «Հոգաչափ շնորհակալ եմ, սիրելիս»: Տեսիլքներն աղոտ ու խելագար աչքեր ունեն, բայց երբ նրանցից մեկը նստած աղմկոտ հառաչում է ու շշնջում. «Միրտը դավաճան է, հայտնի բան է»,- նոր եկած ուրվականներն ու նրանց աչքերը խաղաղվում էին և նմանվում դիակին մոտ նստած ուրվականներին ու նրանց աչքերին: Բայց չնայած դեմքի լավ գույնին (Մարիոն մարդկային ձեռքերի կողմից զգեստավորած ամենաառողջ տեսքով հանգուցյալն էր), Մարիոն Մարիոն չէր: Կարմենը հասկացավ, երբ լողացնում էր նրան: Նա ինքն իրեն նման չէր: Կարմենը վարանում էր: Հանգուցյալը մեռած էր, պարկեշտ, հնազանդ, նույնիսկ ավելի գեր, բայց դա Մարիոն չէր: Հանկարծ կարծես ինչ-որ մեկը

խղճահարությունից շնչաց նրա ականջին, և Կարմենի մտքով մի բան անցավ՝ ակնո՛ց: Կարմենը գնաց ակնոցի հետևից և դրեց Մարիոյի աչքերին: Այդ պահին նկատեց ականջների գունատությունը: Գոհ մտքի փայլատակումից՝ մի քանի քայլ հետ գնաց, որ հեռվից նայի: Բայց ոչ: Դորոն շան պես կրնկակոխ հետևում էր նրան. «Կամ բացիր մեր տիրոջ աչքերը, կամ ակնոցը հանիր: Ասա, խնդրեմ, ակնոցն ինչի համար է, եթե աչքերը փակ են»: Ուրվականները, վզները ձգելով, կանգնում էին ոտքի ծայրերին. «Նայիր ինձ, Մարիո: Ես մենակ եմ: Նորից մենակ: Ամբողջ կյանքս մենակ: Հասկանո՞ւմ ես: Ի՞նչ եմ արել, Տեր Աստված, ինչո՞ւ ես պատժում ինձ»: Իսկ մարդկային խմբերը քչփչում էին. «Սա ո՞վ է»: «Լավիկն է»: «Երևի հարսնացուն է»: «Հարսը կլինի»: «Զգիտեմ, չգիտեմ»: Ծնկի իջած էնկարնան ամեն խոսքի հետ թորքերով խոր շնչում է: «Պինդ փակեք, էդպես ավելի լավ կլինի»: «Մամա ջան, էս ի՞նչ ճղճղոցներ են»: Կարմենը չգիտեր ինչ անել: «Լավ, շնորհակալություն»: Վարանում էր. «Ի՞նչ ծուխ են կապել»: Հանեց Մարիոյի ակնոցը: «Երևի ծիշտ ես, սիրելիս: Ակնոցով ինքն իրեն նման չէ»: Մարիոն այլևս այնտեղ չէր: Կարմենը մտածում էր գրքի և սև սվիտերի մասին, որն ի ցույց էր դնում ռազմատենչ կրծքերը. «Մի վիճիր, Վալեն, իմ կրծքերը իսկական ամոթ են, այրի կնոջը ոչ սազական, այնպես չէ՞», նաև Պիո Տեյոյի ծանուցագրի սև շրջանակի մասին, գուցե նաև՝ եկեղեցու. «Նա նույնիսկ չհասցրեց խոստովանել, միայն մտածիր, սարսափելի է: Դիրեկտոր Աստոնիոն առաջ ընկավ խմբից և գրկեց էնկարնային թևատակերից: Նա ընդդիմանում էր: Երկուսն էլ մարտնչում էին: «Օգնեք: Պետք է հեռացնել նրան այստեղից: Այս կինը չափից դուրս տպավորվող է»: Պարկերացրեք՝ ի՞նչ ամոթ է: Կարծես ինքն է Մարիոյի այրին: Մտքիցս դուրս չի գալիս,

որ *Էլվիրոյի մահից հետո Էնկարնան վազ էր փախիս նրա հետևից*: Վերջապես նրան տարան: Լուիսը գնաց նրա հետ, իսկ Եսթերն օգնեց սրսկել նրան: Հետո հեռախոսով տաքսի կանչեցին և գնացին Չարոյի տուն: Վիսենտեն գնաց նրանց հետ: Կամաց-կամաց Կարմենը կրկին սկսեց իրեն այրի զգալ: «Այդպիսի բաներ»: «Մտածիր քո մասին, Կարմեն, երեխաները քո կարիքն ունեն»: «Գոնե մի ձեռք բացեք, շնչելու օդ չկա»: Ուրվականները գալիս գնում էին: Կարմենը սեղմում էր մեկ փափլիկ, մեկ նյարդային ձեռքերը: Կռանում էր նախ՝ ձախ, հետո՝ աջ, և համբուրում օդը, դատարկությունը, ինչ լիներ: «Շնորհակալ եմ, սիրելիս, չես պատկերացնի՝ որքան շնորհակալ եմ քեզ»:

– Չե՞ն գանգել:

Վալենտինան ձեռքը դնում է Կարմենի սառը և նյարդային դողով բռնկված ձեռքերին, որոնք խաչված են գոգին:

– Մի անհանգստացիր, սիրելիս: Ես քեզ տեղյակ կպահեմ: Հիմա հանգստացիր: Փորձիր հանգստանալ: Հանգստացիր: Վիսենտեն դեռ չի վերադարձել:

Լուիսը մոտ մեկ քառորդ ժամ փակված մնաց նրա հետ: *Երևի խոստովանում էր, բայց, ըստ իս, շնչում էր նրա բերանի մեջ. պատկերացրու՝ այնքան երկար փուլեց, որ նույնիսկ աղոյր հոյս փածեցի՝ ինքս ինձ ասելով. «Միևնույն է, նա ողջ է»: Միայն մտածիր, թե ի՞նչ հիմար եմ: «Նա նման չէ մեռած մարդու: Հաստատ քնած է: Նույնիսկ գույնը չի գցել»:* Ի վերջո Լուիսը դուրս եկավ և ասաց. «Կաթված է: Պետք է որ առավոտյան հինգից հետո եղած լինի: Դա հազվադեպ է պատահում աստենիկ խառնվածքով մարդկանց հետ, ինչպիսին Մարիոն է»։ *Ինձ թվաց՝ աստենիկ ասաց, չէ՞, ինձ վրա շատ ուշադրություն մի դարձրո՛ւ, էդպիսի բառերից գլուխ չեմ հանում, բայց, սիրելիս, Լուիսի*

աչքերը կարմրել էին, կարծես լաց էր եղել, և դա ինձ հուզեց, դա արժանի է շնորհակալության. չէ՞ որ բժիշկները՝ որպես կանոն, անտարբեր ու անզգայուն են լինում, նման դեպքերում, ինչպես ասում են, սովոր են էդպիսի բաների: «Ոչի՞նչ, եթե պատուհանը փոքր-ինչ փակեմ»: «Թող խաղաղության մեջ ննջի, դոնյա Կարմեն»: «Արդեն ցրտում է»: «Լավ, շնորհակալություն», «Այդպիսի բաներ», «Սենյորա, հեռագիր ունե՞ք»: Կարմենը Դորոյի քթին կաթիլ տեսավ: Նյարդայնացած պատռեց հեռագրի ծրարը և կարդալուց հետո արտասվեց: Վալենտինան ուժեղ ու հուզված համբուրեց նրա այտը, հենց այտը՝ այնպես, որ Կարմենը ոչ միայն լսեց համբույրի ձայնը, այլև զգաց դրա ջերմությունը. «Քաջ եղիր: Չպետք է ընկրկես»: Կարմենը նրան տվեց կապույտ թուղթը. «Սա հայրիկից է: Խեղճը ինչերի՞ միջով է անցել: Մտածել անգամ չեմ ուզում»: Արդեն խաղաղված աչքերով ուրվակամները հեռանում էին, բայց նրանցից ոմանք կաչուն ճանձերի պես կպած մնացին դագաղին: «Այդպիսի բաներ»: «Վաղը քանիսի՞ն են վերցնում»: «Ննջիր խաղաղությամբ»: «Ոչի՞նչ, եթե պատուհանը փոքր-ինչ բացեմ, շնչելու օդ չկա»: Ծուխ ու փսփոսոցներ: «Նորից մենակ: Ամբողջ կյանքս մենակ: Ի՞նչ եմ արել, Տե՛ր Աստված, ինչո՞ւ ես պատժում ինձ»: «Սրանք ձևականություններ են, մայրիկ, հանգիստ թող ինձ»: «Գրեք. «Աղոթեք նրա հոգու հանգստության...»: Կարմեն Սոտիլյոյի կողմից: «Դեռ հավարտ չի գալիս, Վալեն, անհնար է համակերպվել էդ մտքի հետ»: «Այդպիսի բաներ»: Կարմենը կռանում էր նախ՝ ձախ, հետո՝ աջ: Շուրթերն ու այտերը ցավում էին անվերջ համբույրներից: Նաև աջ ձեռքը՝ համբույրներից: Ամեն անգամ հուզմունքը հազիվ էր զսպում: Թեև միշտ զագրում էր փափիլիկ ձեռքերից, բայց հիմա շնորհակալ էր դրանց, դրանց տրվելիս ստորագույն ուրախություն

էր զգում, քանզի կարծես խաբում էր ամուսնուն: «Ոչի՞նչ, եթէ պատուհանը փոքր-ինչ փակեմ»: Իմ կարծիքով՝ նա շնչում էր նրա բերանի մեջ, գիտե՞ս: «Լավ, շնորհակալություն: Էս ո՞նց եմ մրսել»: «Լավ մարդիկ մեռնում են, վատերս մնում ենք»: «Լավ, ո՞ւմ համար»: «Նա չի մահացել, նրան խեղդել են»: *Նրա աչքերը կարմրել էին, կարծես լաց էր եղել, և դա ինձ հուզեց, արժանի է շնորհակալության*: «Գիտե՞ք, մեր տիրոջը՝ դոն Պորֆիրիոյին, ֆրանցիսկյանի պես հագած թաղեցին»: Նրանք բնագդաբար զգում են, որ խեղդվում են և շրջվում են... «Այդպիսի բաներ»: «Մենչու, սիրելիս, չես պատկերացնում, թե որքան ուրախ եմ, որ այդքան քաջ ես»: «Հավատա, նա բացարձակ չի փոխվել, նույնիսկ հանուն իրենց հոր չեն ուզում սգավորվել»: «Ննջիր խաղաղությամբ»: Վերջիվերջո գրքերը միայն կեղտ ու փոշի են անում... «Այստեղ մթնոլորտը շատ լարված է»: «Ոչի՞նչ եթե...»: Բժիշկները՝ որպես կանոն, անտարբեր ու անզգայուն են, նման դեպքերում ասում են... «Այդպիսի բաներ»... բայց, ըստ իս, նրանք նման են ջրից դուրս հանած խեղդամահ լինող ձկների... «Թող երկնքի արքայությունը...»:

Կարմենն այնքան կտրուկ է վեր թռչում տեղից, որ վալենտինան վախենում է.

– Հիմա արդեն իսկապես զանգեցին, և չասեք՝ ոչ, վալեն, ես շատ լավ լսեցի:

– Լավ, սիրելիս, հանգստացիր: Երևի Վիսենտեն է: Մենք հենց հիմա քեզ մենակ կթողնենք: Մի անհանգստացիր:

Կարմենը ոտքերը կախում է մահճակալից, փեշը վեր է բարձրանում՝ ի ցույց դնելով չափազանց կլոր ու պիրկ սրունքները: Առանց կռանալու ոտքերը խցկում է կոշիկների մեջ ու հագնում: Հետո հարդարում է մազերը, երկու ձեռքի մատները ազատորեն սահեցնում է մազերի

միջով: Վերջում սվիտերը ձգում է թևատակերի տակ, նախ՝ ձախ, ապա՝ աջ: Գլուխը հա ու չէ անելով՝ թափահարում է:

– Կուրծքս այրու չէ, այնպես չէ՞, Վալեն,– ասում է հուսահատ:– Մի վիճիր ինձ հետ:

Հյուրասենյակից լսվում են տղամարդկանց խեղդվող ձայներ: Վալենտինան ոտքի է կանգնում:

– Սիրելիս, մի անհանգստացիր,– վերադառնում է զարդասեղանի՝ գրքի, ցավազրկող դեղահաբերի ու հեղուկով շշի մոտ, ապա ավելացնում,– կարո՞ղ ես ասել՝ սա ի՞նչ դեղատուն է:

Կարմենը խուսափուկ ժպտում է:

– Դու ճանաչում էիր Մարիոյին,– ասում է:– Լավ մարդ էր՝ լիքը բարդոյթներով: Եթե դեղ չխմեր կամ քթի մեջ քուրք չկաթեցներ, ինչպես ես եմ ասում, չէր քնի: Մոլուցքներ: Ասես՝ չես հավատա, մի գիշեր վեր կացավ ժամը երեքին ու վազքով ուղիղ դեպի հերթապահ դեղատուն:

Վալենտինան այնպես կտրուկ է բարձրացնում գլուխը, որ շիկահեր գանգուրը մի պահ փայլատակում է փայլփլուն աստղի պես: Նա նույնպես ժպտում է:

– Խեղճ,– ասում է նա:– Մարիոն չափազանց ինքնատիպ մարդ էր:

Կարմենը վեր է կենում և զննում իրեն հայելու մեջ: Մեկ-երկու անգամ զայրացած քաշքշում է սվիտերի թևատակերից, նախ՝ ձախ, ապա՝ աջ:

– Կարծես խրտվիլակ լինես,– շշնջում է:– Ոչ սև կրծկալով, ոչ էլ սպիտակով կրծքերս սգի բան չեն, ոչ էլ նման մի բան:

Վալենտինան նրան չի լսում: Զարդասեղանից գիրք է վերցնում ու թերթում:

– Աստվածաշունչ,– ասում է,– միայն չասես, որ Մարիոն նույնպես Աստվածաշունչ էր կարդում,– ապա նորից

ժպտում է և բարձրաձայն կարդում.– «Իսկ դու գնա քո վախճանին: Դու կհանգստանաս, սակայն օրերի վերջում վեր կկենաս, որ սրանաս քո բաժինը» (Դանիել 12:13):

Կարմենը հոնքերի տակից խոնարհաբար նայում է նրան, կարծես ներկա է մի նվաստացուցիչ քննության: Ժամանակ առ ժամանակ կրծքերի տակից մատներով ինքնաբերաբար այս ու այն կողմ է ձգում սև սվիտերը: Երբ խոսում է, կարծես արդարանալիս լինի.

– Նա ասում էր, որ Աստվածաշունչը բեղմնավորում և հանգստացնում էր իրեն:

Վալենտինան քրքջում է.

– Այդպիսի բա՞ն էր ասում: Ի՞նչ զվարճալի է: Բեղմնավորել, կյանքումն ավելի ակնածալի բան չեմ լսել, Մենչու, երդվում եմ: Բայց ինչի՞ վրա էր շեշտը դնում:

Կարմենը հազում է, գնալով ավելի դժվար է խոսում:

– Մոլուցք էր: Մարիոն անընդհատ վերընթերցում էր Աստվածաշունչը, հասկանում ես: Իսկ հիմա,– նրա հայացքը մեղմանում է, բայց ձայնը տարօրինակ ձևով ավելի է կոշտանում,– ես կվերցնեմ այս գիրքը և նորից նրա հետ կլինեմ: Սրանք նրա վերջին ժամերն են, հասկանում ես:

Վալենտինան հանկարծ փակում է գիրքը և տալիս Կարմենին: Ձայների աղմուկը միջանցքում մեծանում է: Անսպասելի լռում են ձայները, մի քանի վայրկյան լռությունից հետո սենյակի դռան վրա նուրբ թակոցներ են լսվում:

– Այո, այո,– ասում է Կարմենը: Եվ բնագրաբար թևատակերից քաշում է սվիտերը:

Լսվում է Մարիոյի ձայնը.

– Վիսենտեն է:

– Գալիս եմ,– ասում է Վալենտինան:– Գալիս եմ:– Մոտենում է Կարմենին և բռնում գոտկատեղից.

- Անկեղծ ասա, սիրելիս, չե՞ս ուզում մնամ քեզ մոտ:

- Վալեն, ես իսկապես ուզում եմ մենակ մնալ: Ինչպե՞ս բացատրեմ քեզ: Դու ինձ լավ գիտես:

Վալենտինան կռանում է, և երկու կանայք այտերը սեղմում են միմյանց, նախ՝ ձախով, ապա՝ աջով, և անտարբերությամբ համբուրում են օդը, դատարկությունը, այնպես, որ երկուսն էլ լսում են համբույրի ձայնը, բայց չեն զգում ջերմությունը:

Փոքրիկ միջանցքում Վիսենտեն սպասում է՝ վերարկուն հագին: Նրա կողքին Մարիոն է՝ կապույտ սվիտերով: Կարմենն օգնում է Վալենտինային հագնել վերարկուն, իսկ հետո երկուսով ձեռքի վերարկուին համապատասխան պայուսակ են փնտրում: Նորից միմյանց են սեղմում այտերը՝ համբուրելով օդն ու դատարկությունը:

- Ցտեսություն, սիրելիս, առավոտ կանուխ այստեղ կլինեմ: Իսկապե՞ս չես ուզում, որ քեզ հետ մնամ:

- Իսկապես, Վալեն, շնորհակալություն ամեն ինչի համար, - շրջվում է Վիսենտեի կողմը, - ինչպե՞ս է էսկարնան:

Վիսենտեն հազում է: Վեճերը նրա համար չեն: Իրեն իր ափսեում չի զգում:

- Քնեց, - ասում է նա: - Ի վերջո քնեց: Լուիսն ասում է, որ չի արթնանա մինչև առավոտ: Անտանելի էր: Կյանքումս այդպիսի բան չեմ տեսել:

Մարիոն այդ երկուսին այնպես է նայում, կարծես նրանք խոսում են օտար լեզվով, և նրանց հասկանալը ծանր բեռ է իր համար: Ձեռքը նրան մեկնելով՝ Վալենտինան ասում է.

- Հոգնած դեմք ունես, Մարիո: Պիտի պառկես:

Մարիոն չի պատասխանում: Կարմենը դա անում է նրա փոխարեն.

– Հիմա կպառկի,– ասում է նա:– Բոլորն արդեն պառկած են:

– Իսկ հայրի՞կը:

– Ես կմնամ նրա հետ:

Վալենտինան ու Վիսենտեն ի վերջո հեռանում են. երկար ժամանակ կարելի է լսել Վալենտինայի կրունկների զգուշավոր հարվածները աստիճաններին, նաև Վիսենտեի քնկոտ ձայնի շշունջը: Կարմենը կանգնում է որդու առջև և ցույց տալիս գիրքը:

– Մարիո,– ասում է նա,– պառկիր, աղաչում եմ: Ուզում եմ հորդ հետ մենակ մնալ: Սա վերջին անգամ է:

Մարիոն տատանվում է.

– Ինչպես կուզես,– ասում է,– բայց եթե ինչ-որ բանի կարիք զգաս, զգուշացրու, ես քնած չեմ:

Ինքնաբերաբար կռանում է և անկեղծորեն համբուրում Կարմենի աջ այտը: Կարմենը հանկարծահաս, գոլ խոնավություն է զգում աչքերի շուրջը: Բարձրացնում է ձեռքերը և մի քանի վայրկյան գրկում նրան: Հետո ասում է.

– Մինչ վաղը, Մարիո:

Մարիոն անցնում է միջանցքով: Տարօրինակ քայլվածք ունի՝ ծանր, ատլետիկ, կարծես դժվարությամբ է վերահսկում սեփական ուժը: Կարմենը շրջվում է և մտնում աշխատասենյակ: Մոխրամանները դատարկում է աղբամանի մեջ և դուրս հանում միջանցք: Այնուամենայնիվ, գրասենյակում ծխախոտի մնացորդի հոտ է գալիս, բայց դա նրան չի անհանգստացնում: Կողպում է դուռը և նստում կոշիկների արկղի վրա: Անջատում է բոլոր լույսերը, բացի մի լամպից, որի լույսը ցայտում է իր գոգին հենց նոր բացած գրքի վրա. լույսի շիթը հասնում է նաև հանգուցյալի ոտքերին:

ՄԻԳԵԼ ԴԵԼԻԲԵՍ
ՀԻՆԳ ԺԱՄ ՄԱՐԻՈՅԻ ՀԵՏ

MIGUEL DELIBES
CINCO HORAS CON MARIO

Թարգմանիչ՝ Խմբագիր՝	Ռուզաննա Պետրոսյան Արքմենիկ Նիկողոսյան
Հրատ. բաժնի ղեկավար՝ Տեխն. խմբագիր՝ Էջադրող՝ Սրբագրիչ՝ Շապիկը՝ Կազմի ձևավորումը՝	Հռիփսիմե Մադոյան Արարատ Թովմասյան Նարինե Հովհաննիսյան Լիանա Չոբանյան Սարգիս Անտոնյանի Վիտալի Ասրիևի



Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am